

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը Բանակի օրվա կապակցությամբ 28.01.2019

Սիրելի՛ հայրենակիցներ, զինվորներ, սպաներ, գեներալներ, ազատամարտիկներ

Շնորհավորում եմ Բանակի օրվա կապակցությամբ:

Պատմության բոլոր ժամանակներում հայ ժողովրդին վիճակված է եղել կռիվ տալ իր հողի, իր ինքնության պահպանման համար:

Հայկական բանակի ծնունդը պայմանավորված էր հայ ժողովրդի պատմության նորագույն ժամանակներում ծավալված իրադարձություններով, երբ վերստին հայ ժողովրդին վիճակված էր գեներալներ և պաշտպաններ իր հողն ու ջուրը:

Հայոց բանակը ստեղծվեց Արցախյան ազատամարտի ամենաթեժ պահին, և այդ իրադարձությունը բեկումնային եղավ մեր հաղթանակի համար:

Անցած 27 տարիների ընթացքում ու հատկապես ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մեր բանակն ապացուցեց իր հզոր և մարտունակ լինելը:

Հայկական բանակը մեր գոյության, հայկական երկու պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության ու խաղաղության երաշխավորն է:

Սիրելի՛ զինվորականներ, հպարտություն է կրել հայրենիքի պաշտպանի կոչումը, ու վստահ եմ յուրաքանչյուրդ այդ կոչումը կրում եք հենց այդ գիտակցումով: Դա առաքելություն է, որը դուք իրականացնում եք պատվով և անձնվիրությամբ: Կրկին շնորհավորում եմ Բանակի օրվա առթիվ:

Փառք հաղթանակած Հայոց բանակին:

Խաղաղություն թող լինի Հայոց աշխարհում: